ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

No 1459-Ա/Ի «01» 10 2010

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2907 «ԱՏԱՂԱԶԱԳՈՐԾԱԿԱՆ, ՄԱՆՐԱՀԱՏԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ, ԱՊԱԿԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՀՅՈՒՍՆ, ԱՏԱՂԱԶԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ՝ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետով հավանության արժանացած հայեցակարգի 4.7 կետը, ՀՀ ԿԳ նախարարի 2009թ. մայիսի 12-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացությունները, ինչպես նաև նպատակ ունենալով առանձին ուսումնական հաստատություններում մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկել 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն, ատաղձագործ» որակավորման պետական կրթական չափորոշիչը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն, ատաղձագործ» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:
2. Նախարարության աշխատակազմի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությանը՝ մինչև 2010 թվականի դեկտեմբերի 30-ը նախարարի հաստատմանը ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է 2907 «Ատաղձագործական,

մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն, ատաղձագործ» որակավորման պետական կրթական չափորոշիչը:

3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն, ատաղձագործ» որակավորման պետական կրթական չափորոշիչը ներդնել 2011թ. սեպտեմբերի 1-ից՝ մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկելու նպատակով:
4. «Կրթության ազգային ինստիտուտի» ՓԲԸ տնօրենին /Ն. Ղուկասյան/՝ ապահովել 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն, ատաղձագործ» որակավորման պետական կրթական չափորոշչի փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից ստացված վերլուծական հաշվետվությունների վերլուծությունը և լրամշակման անհրաժեշտության վերաբերյալ առաջարկի ներկայացումը:
5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն, ատաղձագործ» որակավորման պետական կրթական չափորոշիչը ՀՀ արդարադատության նախարարություն պետական գրանցման ներկայացնել փորձարկման պարբերաշրջանի ավարտից և սահմանված կարգով վերանայելուց հետո:
6. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին:

ՆԱԽԱՐԱՐ Ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված ___
ՀՀ կրթության և գիտության նախարարի
20__թ. _____ -ի N ___-Ն հրամանի

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2907 «ԱՏԱՂԱԳՈՐԾԱԿԱՆ,ՄԱՆՐԱՀԱՏԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ,ԱՊԱԿԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՀՅՈՒՍՆ,ԱՏԱՂԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԳԼՈՒԽ 1.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ)ԿՐԹՈՒԹՅԱՆ 2907 «ԱՏԱՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ՄԱՆՐԱՀԱՏԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ, ԱՊԱԿԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՀՅՈՒՍՆ,ԱՏԱՂԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության «Արհեստավոր» որակավորման աստիճանի 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն, ատաղձագործ» որակավորումը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հուլիսի 31-ի «ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N838-Ն որոշմամբ:

2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատա - կագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագրի յուրացումն իրականացվում է ուսուցման՝

ա. առկա ձևով,

բ. դրսեկության (էքստեռն) ձևով:

3.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատա - կագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագրի յուրացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

1) կրթության առկա ձևով՝

ա. միջնակարգ կրթության հիմքով ՝ 1 տարի.

բ. հիմնական կրթության հիմքով առանց միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի՝ 1 տարի.

գ. հիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում՝ 3 տարի.

2) դրսեկության (էքստեռնատ) ձևով.

կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:

4. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատա- կագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով և հիմնական կրթության հիմքով՝ առանց

միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագիրն ուսումնառող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 1476 ժամ է, առավելագույն ծավալը՝ 2322 ժամ։ Հիմնական կրթական ծրագիրը հիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 104 շաբաթով։

ԳԼՈՒԽ 2.
ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ)ԿՐԹՈՒԹՅԱՆ 2907 «ԱՏԱՂԶԱԳՈՐԾԱԿԱՆ, ՄԱՆՐԱՀԱՏԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ, ԱՊԱԿԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՀՅՈՒՍՆ,ԱՏԱՂԶԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԱՎԱՐՏԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորմամբ մասնագետը կարող է իրականացնել հետևյալ զբաղմունքները.

1) Տանիքի, հատակի պատրաստման աշխատանքների իրականացում,
2) Դռների և պատուհանների պատրաստման աշխատանքների իրականացում,
3) Կլոր անտառանյութերի պատրաստման, տեսակավորման, չափման, հաշվառման, մակնիշավորման աշխատանքների իրականացում,
4) Սղոցանյութերի և նախապատրաստվածքների պատրաստման, տեսակավորման, չափման, հաշվառման, մակնիշավորման աշխատանքների իրականացում,
5) Կենցաղային փայտե շինվածքների և շինվածքամասերի, տարբեր իրերի պատրաստման աշխատանքների իրականացում,
6) Շնարարական տարբեր փայտե շինվածքների և շինվածքամասերի պատրաստման աշխատանքների իրականացում,
7) Փայտե շինվածքների և շինվածքամասերի վերանորոգման աշխատանքների իրականացում։

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորմամբ շրջանավարտի մասնագիտական գործունեության պարտականություններն են.

1) Անզեն աչքով ծառերի տեսակներ ճանաչելը,
2) Անզեն աչքով սղոցանյութերի և նախապատրաստվածքների կառուցվածքով ծառատեսակներ ճանաչելը,
3) Փայտե շինվածքներ և շինվածքամասեր տեխնիկական պահանջներով պատրաստելը և ստուգելը,
4) Ձեռքով, էլեկտրական սարքավորումներով, հաստոցներով տիպային փայտամշակման աշխատանքներ իրականացնելը,
5) Երեսապատման և երեսամշակման աշխատանքներ իրականացնելը,
6) Հաստոցներով փայտամշակման աշխատանքներ իրականացնելը,
7) Փայտամշակման միացումներ պատրաստելը,
8) Տանիքի, հատակի փայտե շինվածքամասեր պատրաստելը,
9) Դռներ և պատուհաններ պատրաստելը,

10) Աշխատավայրում,աշխատատեղում և աշխատանքներ իրականացնելու ժամանակ անվտանգության և հակահրդեհային կանոններ պահպանելը։

ԳԼՈՒԽ 3.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2907 «ԱՏԱՂԶԱ ԳՈՐԾԱԿԱՆ, ՄԱՆՐԱՀԱՏԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ, ԱՊԱԿԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՀՅՈՒՍՆ, ԱՏԱՂԶԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

7. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությա 2907 «Ատաղձագործական,մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար ապահովելու է հետևյալ ընդհանուր պահանջները՝

1) ժամանակակից անհատի և քաղաքացու ձևավորման պահանջներին համապատասխան ազգային և համամարդկային մշակույթի ու պատմության վերաբերյալ գիտելիքների յուրացում, դրանք մասնագիտական գործունեության ընթացքում կիրառելու հմտությունների ձևավորում,
2) մասնագիտական ոլորտի ընդհանուր գիտելիքների յուրացում, որոնք բավարար հիմք են հանդիսանում մասնագիտական խնդիրների հետ կապված հանձնարարությունները կատարելու համար,
3) մասնագիտական տեսական ու գործնական գիտելիքները կիրառելով արդյունավետ օգտագործել համապատասխան գործիքներ, սարքավորումներ,հարմարանքներ,
4) մասնագիտական գործառնությունները համապատասխան նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,
5) մասնագիտական տերմինաբանության ճիշտ ընկալում և կիրառում,
6) մասնագիտական գործունեության ժամանակ համապատասխան գործողությունների սոցիալական հետևանքները հաշվի առնելու հմտություն,
7) մասնագիտական ինքնազարգացման և կատարելագործման նպատակով իրեն անհրաժեշտ տեղեկությունները մասնագիտական աղբյուրներից ձեռք բերելու հմտությունների ձևավորում,
8) աշխատանքային խնդիրների լուծման ժամանակ պատասխանատվություն ստանձնելու, լուծումները հիմնավորված իրականացնելու կարևորությունը պատկերացնելու, նման աշխատանքի պատրաստ լինելու մակարդակ,
9) ինչպես ընդհանուր, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում աշխատելու համար հմտությունների ձևավորում։

ԳԼՈՒԽ 4.
ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2907 «ԱՏԱՂԶԱԳՈՐԾԱԿԱՆ, ՄԱՆՐԱՀԱՏԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ, ԱՊԱԿԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՀՅՈՒՍՆ, ԱՏԱՂԶԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

8. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ»

որակավորման հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում ապահովելու է՝

1) ՀՀ սահմանադրության, տվյալ զբաղվածության բնագավառը կարգավորող նորմատիվ հիմնական ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթների իմացություն,

2) հայոց լեզվի տիրապետում,

3) մեկ օտար լեզվով հաղորդակցում,

4) առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոնները տիրապետելու իմացություն,

5) ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,

6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին։

7) հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների, վարվելակերպի, հաղորդակցման տարրական կանոնների իմացություն,

8) մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների վերաբերյալ իմացություններ։

9. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական,մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում ապահովելու է՝

1) էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկում,

2) արտակարգ իրավիճակների մասին պատկերացումների ձևավորում և արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին տիրապետում, փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքայի և փրկարարական տեխնիկայի վերաբերյալ պատկերացումների ձևավորում, անհատական պաշտպանության միջոցների օգտագործման կարողություն։

10. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը ապահովում է շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետումը՝ օգտվելով աղյուսակ 1-ում բերված մոդուլներից։

11. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար ապահովում է ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերումը՝ օգտվելով աղյուսակ 2-ում բերված մոդուլներից։

ԳԼՈՒԽ 5.

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2907 «ԱՏԱՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ՄԱՆՐԱՀԱՏԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ, ԱՊԱԿԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՀՅՈՒՍՆ, ԱՏԱՂԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

12. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները։

2) հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ, որոնք տվյալ բնագավառում ունեն միջին և բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում և (կամ) տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ։

3) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը ունի համապատասխան մասնագիտական կրթություն և (կամ) մասնագիտական աշխատանքի փորձ։

4) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը կամ վարպետը։

13. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագրի իրականացման ուսումնամեթոդական ապահովման համար սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա) ապահովում, որոնք բովանդակությամբ համապատասխանում են տվյալ մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ցանկին։

2) յուրաքանչյուր առարկայի և մոդուլի, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերի համար (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքերի) ձևավորվում են համապատասխան բազաներ. դասագրքեր, ուսումնամեթոդական և մեթոդական նյութեր, ձեռնարկներ, ուղեցույցներ, գործնական խաղերի կամ իրավիճակային սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ (անհրաժեշտության դեպքում), երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր։

14. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ»

որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ՈՒսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. մասնագիտական տեխնոլոգիայի

բ. հատուկ մասնագիտական

գ. հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ

դ. օտար լեզվի

ե. աշխատանքի անվտանգության

2) ՈՒսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա. փայտանյութերի հետազոտման և փորձարկման

3) ՈՒսումնական արհեստանոցներ

ա. փայտամշակման

4) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ,

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ, ինչպես նաև սոցիալական գործընկերության հիման վրա օգտվել համապատասխան կազմակերպությունների նյութատեխնիկական բազաներից։

15. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական տարվա սկիզբը, առկա ուսուցման ձևի համար, սահմանվում է սեպտեմբերի 1 -ը, իսկ հեռակա, դրսեկության (էքստեռնատ) ձևերով ուսուցման դեպքում՝ համաձայն ուսումնական պլանների,
2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,
3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանցանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները։
4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,
5) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,
6) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամ-կետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը։

16. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ»

որակավորման հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները.

2) պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով.

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները.

4) պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները.

5) ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնա-արտադրական արհեստանոցներում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում.

6) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

17. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսանողների միջանկյալ ատեստավորում՝ ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով: Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել արդյունքի (մոդուլի) յուրացման ընթացքում կամ ավարտին,

2) որակավորման շնորհում՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման միջոցով,

3) ու սումնական կիսամյակի սկզբում ուսանողի տեղեկացվում՝ կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին: Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

4) շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

5) պետական ա մփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է երաշխավորի սույն չափորոշչով 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման արհեստավորի պատրաստվածության նկատմամբ սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանությունը:

ԳԼՈՒԽ 6.
ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2907 «ԱՏԱՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ՄԱՆՐԱՀԱՏԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ, ԱՊԱԿԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՀՅՈՒՍՆ, ԱՏԱՂԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

18. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման կրթական ծրագիրն իրականացվում է հաշվի առնելով 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը, որը չպետք է սահմանափակի ուսումնական գործընթացի իրականացման եղանակների, ձևերի, մեթոդների ընտրության հնարավորությունները։

19. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս՝

1) օգտվելով սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանից կազմում և հաստատում է մասնագիտության ուսումնական պլանը,

2) կարող է մասնագիտության ուսումնական պլանը կազմելիս փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանուր պահանջները,

3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը՝ պահպանելով արդյունքները և կատարման չափանիշները,

4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը։

Աղյուսակ 1

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական,մանրահատակագործական,ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Ատաղձագործ,հյուսն» որակավորման հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՀ -3-10-001
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Սահմանել ուսումնառության անձնական նպատակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները, բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները, ինչպես օրինակ՝ անհատական, խմբային:
ՈՒսումնառության արդյունք 2	Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բանավոր և գրավոր խոսքի, պահպանելով համապատասխան կառուցվածք, բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ, գ. տեղեկատվության առանձնացում /խմբավորումը կատարում է նպատակային, դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:
ՈՒսումնառության արդյունք 3	Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, (պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը), բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները, գ. ցուցաբերում է համոզելու կարողություն, դ.կատարում է ճիշտ ամփոփում /եզրափակում:
ՈՒսումնառության արդյունք 4	Կատարել փաստաթղթավորում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության,

	բ.ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը, գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱԱՕ -3-10-001
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել կազմակերպություններում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը, բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը, գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը, դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները, ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը, զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները, բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը, գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները, դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները, ե. ճիշտ է ներկայացնում թունաքիմիկքտների և այլ վտանգավոր նյութերի հետ աշխատանքի կանոնները:
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները, գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները,

	դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը, ե. ճիշտ է պահպանում աշխատանքի ընթացքում անհատական հիգիենայի կանոնները:
ՈՒսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը, բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը, գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ, դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները, ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը, զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը, է. թունավորումների դեպքում առաջին օգնությունը ճիշտ է կատարում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	SS -3-10-001
Մոդուլի նպատակը	Տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	WORD ծրագիր (հիմնական տեղեկություններ
Կատարման չափանիշներ	ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը, բ. բացել նոր փաստաթուղթ, գ. ստեղնաշարի օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ, ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում, զ. փակել փաստաթուղթը, է. բացել առկա փաստաթուղթը, ը. ներկայացնել Zoom գործիքի հնարավորությունները:
ՈՒսումնառության արդյունք 2	Տեքստերի տարրական ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, բ. նշել բառերը և տեքստային հատվածները, գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,

	դ. կատարել տողերի հավասարեցում, ե. փոխել միջտողային տարածությունները, զ. փոխել տեքստի գույնը, է. փոխել տեքստի գունային ֆոնը, ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից, թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները, ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները, ժա.կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը, ժբ. փոխել լուսանցքների խորությունները, ընտրել էջի ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքերը, ընտրել թղթի չափերը, ժգ. պատճենել տեքստը, ժդ. տեղափոխել տեքստը, ժե. տողադարձել տեքստը, ժզ. համարակալել էջերը:
ՈՒսումնառության արդյունք 3	Փաստաթղթի պահպանում
Կատարման չափանիշներ	ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը, բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը, գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:
ՈՒսումնառության արդյունք 4	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
Կատարման չափանիշներ	ա. պատրաստել աղյուսակ, բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ, գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ, դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ, ե. ջնջել աղյուսակի տողերը և սյուները, զ. փոխել սյունակի լայնությունը մկնիկի օգնությամբ, է. փոխել տողի բարձրությունը մկնիկի օգնությամբ, ը. փոխել աղյուսակի գծերի գույնը, թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:
ՈՒսումնառության արդյունք 5	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
Կատարման չափանիշներ	ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ, բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, գ. գծագրել կանոնավոր պատկերներ, դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով,

	ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները, զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ, է. գծագրել տեքստային բլոկներ, ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները, թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները, ժ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:
ՈՒսումնառության արդյունք 6	Փաստաթղթի տպագրում
Կատարման չափանիշներ	ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը, բ. ներկայացնել Print պատուհանի ֆունկցիաները, գ. տպագրել փաստաթուղթը:

Աղյուսակ2

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակագործական,ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Ատաղձագործ,հյուսն» որակավորման հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱՅԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՊԱՏԿԵՐՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀԱ-3-10-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ձևավորել սովորողների մոտ տիպային աշխատանքային գծագրեր կարդալու ունակություններ, ինչպես նաև տիպային հանգույցների, հանգույցամասերի էսքիզներ և աշխատանքային գծագրեր կատարելու հմտություններ: Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր պատրաստվում են կատարել ատաղձագործական,հյուսնական աշխատանքներ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Կատարել երկրաչափական կառուցումներ, տիպային դետալների պրոյեկտումներ հարթության վրա, տարածական աքսոնոմետրիկ պատկերում, կտրվածքներ, էսքիզներ և աշխատանքային գծագրեր, բնօրինակից համապատասխան էսքիզ, աշխատանքային գծագիր, չափերի տեղադրում:
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է կատարում երկրաչափական կառուցումները հարթության վրա՝ կորերի լծորդում, փոխուղղահայաց ուղիղների կառուցում, եռանկյունների կառուցում կորդինատներով և այլն,

	բ. ճիշտ է կատարում տիպային հանգույցամասերի պրոեկտումը հարթությունների վրա և պատկերում դրանց երեք պրոեկցիաները, գ. ճիշտ է կառուցում տիպային հանգույցամասերի տարածական (աքսիոնոմետրիկ) պատկերները, դ. ճիշտ է տալիս կտրվածքներ և կատարում առաջադրված տիպային հանգույցամասերի աշխատանքային գծագրերը և էսքիզները, ե. ճիշտ է պատկերում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա տիպային հանգույցամասերի չափերը, զ. ճիշտ է կատարում տիպային հանգույցամասերի բնօրինակից համապատասխան էսքիզը և աշխատանքային գծագիրը:
ՈՒսումնառության արդյունք 2	Կարդալ աշխատանքային գծագրերը,մեկնաբանել մասշտաբները,տեխնիկական պայմանները և պայմանական նշանները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում մասշտաբը,պայմանական նշանները, բ. ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերի վրա պատկերված չափերի թույլտվածքները և մաքրության դասերի նշանակումները, գ. ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա պատկերված մակերևույթների ձևի թույլատրելի շեղումները, դ. ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերի և էսքիզի վրա ներկայացված տեխնիկական պայմանները, ե. ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերի կամ էսքիզի վրա պատկերված բութակի, տարբեր նշանակության առվակների, երեսակների, փորակների:
ՈՒսումնառության արդյունք 3	Տարբերակել շինարարական գծագրերում փայտե կառուցվածքները,ներկայացնել հավաքական գծագրերում տիպային միացությունները, կարդալ փայտե կառուցվածքների աշխատանքային գծագրերը,մեկնաբանել հավաքական գծագրերում պայմանական նշանակումները, մասնագրերը և տիպային հավաքական գծագրերի տեխնիկական պահանջները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում շինարարական գծագրերի տարերը, մասշտաբները, բ. ճիշտ է տարբերակում շինարարական գծագրերում փայտե կառուցվածքների հավաքական գծագրերը, ներկայացնում հավաքական գծագրերում տիպային միացությունները, բ. ճիշտ է բացատրում շինարարական և հավաքական գծագրերում պայմանական նշանակումները և մասնագրերը, դ. ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրի և մասնագրի փոխադարձ կապը, և կարողանում գծագրերի փաթեթից, օգտվելով հավաքական գծագրից ընտրել համապատասխան հանգույցամասի աշխատանքային գծագիրը, ե. ճիշտ է մեկնաբանում տիպային հավաքական գծագրերի տեխնիկական պահանջները: զ. ճիշտ է պատկերում փայտե կառուցվածքների և հանգույցների էսքիզները և աշխատանքային գծագրերը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԹՈՒՅԼՏՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՆՍՏԵՑՎԱԾՔՆԵՐ, ԱՆՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՉԱՓԻՉ, ՉԱՓԱՆՇՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՉԱՓՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀԱ-3-10-002
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ձևավորել սովորողների մոտ չափիչ գործիքներով թույլտվածքների, նստեցվածքների, անհարթությունների չափումներ կատարելու ունակություններ: Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր պատրաստվում են կատարել ատաղձագործական,հյուսնական աշխատանքներ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀԱ-3-10-001 «Ճարտարագիտական գրաֆիկայի եվ

	շինարարական գծագրության տարրերի պատկերման ունակություն» մոդուլը
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Պարզաբանել հանգույցամասերի չափերի թույլտվածքների և նստեցվածքների համակարգը, պարզաբանել ճշտության պայմանական նշանները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում թույլտվածքը և նստեցվածքը, բացակը և ձգվածքը, բ. ճիշտ է պարզաբանում հանգույցամասերի մշակման ճշտությունը կանխորոշող պայմանները, գ. ճիշտ է մեկնաբանում մշակվող հանգույցամասերի մաքրությանը և որակին ներկայացվող հիմնական պահանջները, դ. ճիշտ է մեկնաբանում տիպային հանգույցամասերի համափոխարինելիության սկզբունքը, ե. ճիշտ է մեկնաբանում տիպային հանգույցամասի նոմինալ, սահմանային և իրական չափերը: զ. ըստ պայմանի ճիշտ է հաշվարկում թույլտվածքը,նստեցվածքը, բացակը, ձգվածքը:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել փայտանյութի մակերևույթների մշակման անհարթությունները, պարզաբանել պայմանական նշանները:
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է մեկնաբանում անհարթությունների բնութագիրը, տեսակները և պարամետրերը, բ. ճիշտ է մեկնաբանում անհարթությունների համեմատական եղանակը: գ. ճիշտ է պարզաբանում անհարթությունների պայմանական նշանները, պատկերում աշխատանքային գծագրերում:
ՈՒսումնառության արդյունք 3	Կատարել հիմնական չափիչ ու չափանշման գործիքներով չափումներ, ստուգումներ:
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է մեկնաբանում չափումը և սահմանում օգտագործվող ժամանակակից չափման միավորները, բ. ճիշտ է մեկնաբանում չափման մեթոդները և դրանց իրականացման եղանակները, գ. ճիշտ է մեկնաբանում հիմնական չափիչ ու չափանշման գործիքների՝ չափերիզ, պահեստային մետր, խազքաշ, անկյունաքանոն, կենտրոնափնտրող-անկյունաքանոն, եռունոկ, անկյունացույց, չափակարկին, ներսաչափ, հարթաչափ, հարթաչափ ուղղալարով, ռեյսմուս, չափոց, կառուցվածքները, դ. ճիշտ է օգտվում հիմնական չափանշման գործիքներից, կատարում չափանշումներ դ. ճիշտ է օգտվում հիմնական չափիչ գործիքներից, կատարում չափումներ և մեկնաբանում չափելու ճշտությունը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԾԱՌԵՐԻ և ՓԱՅՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀԱ-3-10-003
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողների մոտ ձևավորել արտաքին տեսքով, փայտանյութի հիմնական հատկություններով ու կտրվածքներով ծառատեսակները որոշելու, արատները տարբերակելու ունակություններ:Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, որոնք պատրաստվում են կատարել ատաղձագործական, հյուսնական աշխատանքներ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար

	մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել ծառի կառուցվածքը, ծառերի դասակարգումը և կիրառման բնագավառները:որոշել ըստ արտաքին տեսքի ծառատեսակները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում ծառի կառուցվածքը, բ. ճիշտ է որոշում ըստ արտաքին տեսքի ծառի տեսակները, գ. ճիշտ է մեկնաբանում ծառերի դասակարգումը՝փշատերև և սաղարթավոր և օգտագործման բնագավառները:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել փայտանյութի տեսակները, դասակարգումը, կտրվածքները, պարզաբանել ըստ հիմնական կտրվածքների փայտանյութի կառուցվածքը, որոշել ըստ կառուցվածքի ծառատեսակը,:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում ծառի բնի հիմնական կտրվածքները, բ. ճիշտ է պարզաբանում ըստ հիմնական կտրվածքներով փայտանյութի կառուցվածքը՝ բնափայտի շերտ(սպիտկեն), միջուկ, տարիքային շերտ, ծուծային ճառագայթներ, ծուծային կրկնողություն, հաղորդակցող անոթներ, խեժային ուղիներ: գ. ճիշտ է որոշում ըստ հիմնական կտրվածքներով ծառատեսակները: գ. ճիշտ է մեկնաբանում փայտանյութի տեսակները՝ հասուն փայտանյութ, միջուկավոր, անմիջուկ և դասակարգումը:
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել հիմնական ֆիզիկական, քիմիական, մեխանիկական, տեխնոլոգիական հատկությունները, կիրառման բնագավառը, որոշել ֆիզիկական հատկությունների միջոցով փայտանյութի տեսակը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում փայտանյութերի ֆիզիկական և քիմիական հատկությունները՝արտաքին տեսք, փայլ, կազմվածք, հոտ, խոնավություն, խտություն, ջերմահաղորդականություն, ձայնահաղորդականություն, բացատրում հատկությունների փոփոխմանը ազդող միջոցների կիրառման եղանակները, բ. ճիշտ է որոշում ֆիզիկական հատկությունների միջոցով փայտանյութի տեսակը, գ. ճիշտ է մեկնաբանում փայտանյութի քիմիական հատկությունները և ներկայացնում ըստ այդ հատկությունների փայտանյութի օգտագործման բնագավառները, դ. ճիշտ է մեկնաբանում փայտանյութի մեխանիկական և տեխնոլոգիական հատկությունները՝ ամրություն, ձևափոխելիություն, հարվածային մածուցիկություն, մետաղական միացումների նկատմամբ պահվելիություն, ճեղքելիություն, ճկունություն, մաշվածադիմացկունություն: ե. ճիշտ է մեկնաբանում ոստերի, ճաքերի, բնի ձևի, կառուցվածքային արատների սահմանումը,տեսակները, ազդեցությունը փայտանյութի վրա, զ. ճիշտ է կատարում ոստերի, ճաքերի, բնի ձևի, կառուցվածքային արատների չափումներ:
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել փայտանյութի սնկային, կենսաբանական արատների, քիմիական գունավորման գոյացման տեսակները, դրանց ազդեցությունը փայտանյութի որակի վրա, որոշել քիմիական գունավորման գոյացման միջոցով ծառատեսակները:
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է մեկնաբանում սնկային, կենսաբանական արատների և քիմիական գունավորման սահմանումը, բ. ճիշտ է մեկնաբանում սնկային, կենսաբանական արատների և քիմիական գունավորման տեսակները, գ. ճիշտ է մեկնաբանում սնկային,կենսաբանական արատների և քիմիական գունավորման արատների ազդեցությունը

	փայտանյութի որակի վրա, դ. ճիշտ է որոշում քիմիական գունավորման գոյացման միջոցով ծառատեսակները:
ՈՒսումնառության արդյունք 5	Բացատրել փայտանյութի ածխացման, գոգավորության, մեխանիկական, մշակման և տարատեսակ արատների տեսակները, ազդեցությունը փայտանյութի որակի վրա, կատարել ածխացման, գոգավորության արատների չափումներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում փայտանյութի ածխացման, գոգավորության, մեխանիկական, մշակման և տարատեսակ արատների սահմանումը, բ. ճիշտ է մեկնաբանում փայտանյութի ածխացման, գոգավորության, մեխանիկական, մշակման և տարատեսակ արատների տեսակները, գ. ճիշտ է մեկնաբանում փայտանյութի ածխացման, գոգավորության, մեխանիկական, մշակման և տարատեսակ արատների ազդեցությունը փայտանյութի որակի վրա, դ. ճիշտ է կատարում ածխացման, գոգավորության արատների չափումներ:
ՈՒսումնառության արդյունք 6	Մեկնաբանել փայտանյութի մթնոլորտային չորացումից, հոտումի և միջատների քայքայումից ապահովումը, փայտանյութերը բոցավառումից պաշտպանելու միջոցները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՁԵՌՔԻ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀԱ-3-10-004
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողների մոտ ձևավորել ձեռքի գործիքներով աշխատանքներ կատարելու հմտություններ: Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, որոնք պատրաստվում են կատարել ատաղձագործական, հյուսնական աշխատանքներ:
Մոդուլի տևողությունը	60 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀԱ-3-10-003 «Ծառերի և փայտանյութերի հիմնական հատկությունների բնութագրման ունակություն» մոդուլը
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել ձեռքի գործիքներով աշխատանքներ կատարելու աշխատատեղը, մեկնաբանել ըստ նշանակության կատարվող աշխատանքների բնութագիրը, կատարել տիպային աշխատանքներ ձեռքի ընդհանուր նշանակության գործիքներով, օգտվել սևեռող հարմարանքներից:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պարզաբանում աշխատատեղի բնութագրումը, նախատեսված սարքավորումները՝ դազգահ, գործիքների համար նախատեսված դարակներ և դարակաշարեր, օդափոխիչ, էլեկտրական վահանակ, և դրանց կառուցվածքը, բ. ճիշտ է մեկնաբանում ձեռքի գործիքներով ըստ նշանակության կատարվող աշխատանքների բնութագիրը, գ. ճիշտ է մեկնաբանում սևեռող հարմարանքների՝ անուրներ, սեպադիրներ, սեղմակներ-պտուտակամամուլներ, սեղմակապեր, մամլիչներ, մամլակներ, աշխատանքի սկզբունքը, դ. ճիշտ է մեկնաբանում մուրճի տեսակները, կարողանում կատարել դրանցով տիպային աշխատանքներ՝ օգտվելով նաև սևեռող հարմարանքներից,

	ե. ճիշտ է կատարում աքցանով, տափաշուրթով, համաքցանով, լրափորիչով, սեպակերպ և խաչակերպ պտուտակիչներով տիպային աշխատանքներ՝ օգտվելով նաև սևեռող հարմարանքներից, զ. պահպանում է անվտանգության կանոնները:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել ձեռքի հատման և սղոցման գործիքներով կատարվող աշխատանքները, կատարել տիպային աշխատանքներ, օգտագործել սևեռող հարմարանքներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում ձեռքի հատման գործիքներով՝ ուղիղ, սուրանկյուն և բութանկյուն կացիններ, կատարվող աշխատանքների բնութագիրը, կատարում դրանցով տիպային աշխատանքներ, բ. ճիշտ է մեկնաբանում սղոցման գործիքներով կատարվող աշխատանքների բնութագիրը, ներկայացնում սղոցման գործիքների տեսակները և կառուցվածքները, գ. ճիշտ է կատարում սղոցով, տարբեր տեսակի ձեռնասղոցներով, նրբասղոցով, աղեղասղոցով, տիպային աշխատանքներ, օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, դ. ճիշտ է կատարում ձեռքի էլեկտրական սղոցով տիպային աշխատանքներ, ե. պահպանում է անվտանգության կանոնները:
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել ձեռքի կտրող գործիքներով կատարվող աշխատանքները, կատարել տիպային աշխատանքներ, օգտագործել սևեռող հարմարանքներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում կտրող գործիքներով՝ տարբեր տեսակի ձեռքի ռանդաներ, դուրեր, դանակներ, խարտոցներ, ձեռքի էլեկտրական ռանդա, կատարվող աշխատանքների բնութագիրը, բ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի ռանդաներով տիպային աշխատանքներ, օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի դուրերով տիպային աշխատանքներ, օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, դ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի դանակներով տիպային աշխատանքներ, օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, ե. ճիշտ է կատարում տարբեր տեսակի խարտոցներով տիպային աշխատանքներ, օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, զ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի ձեռքի էլեկտրական ռանդայով տիպային աշխատանքներ, է. պահպանում է անվտանգության կանոնները:
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել ձեռքի գայլիկոնման սարքերով և գործիքներով կատարվող աշխատանքները, կատարել տիպային աշխատանքներ, օգտագործել սևեռող հարմարանքներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում ձեռքի գայլիկոնման սարքերով և գործիքներով կատարվող աշխատանքների բնութագիրը, գայլիկոնման սարքերի և գործիքների տեսակները, բ. ճիշտ է կատարում ձեռքի շաղափիչով տարբեր գայլիկոններով տիպային աշխատանքներ, օգտագործելով նաև սևեռող

	հարմարանքներ, գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի գչիրներով տիպային աշխատանքներ, օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, դ. պահպանում է անվտանգության կանոնները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀՅՈՒՄՆԱՅԻՆ ՄԻԱՑՈՒՄՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ, ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀԱ-3-10-005
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողների մոտ ձևավորել և զարգացնել անկյունային միացումներ պատրաստելու, տարբեր եղանակներով ամրացնելու հմտություններ: Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, որոնք պատրաստվում են կատարել ատաղձագործական, հյուսնական աշխատանքներ:
Մոդուլի տևողությունը	96 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀԱ-3-10-004 «Ձեռքի գործիքներով աշխատանքների հմտություններ» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Մեկնաբանել ամրակումների տեսակները, կառուցվածքը, կատարել միացումներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում ամրակների տեսակները՝ փայտամեխ, ներդրովի բութակ, սեպ, երիթ, մեխ, գամ, հեղույս, անուր, անկյունակ, կարգաբերիչ, ճարմանդ, հաստամեխ,
	բ. ճիշտ է մեկնաբանում ամրակումների կառուցվածքը:
ՈՒսումնառության արդյունք 2	Մեկնաբանել սոսինձների բաղադրությունը, տեսակները, կատարել միացումներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում սոսինձների տեսակները՝ ոսկրային, սպիտակուցային, սինթետիկային, էպոքսիդային, բազմավինելացետատային,:
	բ. ճիշտ է մեկնաբանում սոսինձների բաղադրությունը:
ՈՒսումնառության արդյունք 3	Մեկնաբանել անկյունային միացումների տեսակները, բնութագիրը, պատկերել անկյունային միացումների էսքիզներ, աշխատանքային գծագրեր, պատրաստել ըստ պայմանի հանգուցամասեր, կատարել միացումներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում անկյունային միացումների տեսակները՝ միակի բաց միջանցիկ բութակային, միակի թաքնակերպված միջանցիկ գաղտնաբութակային, միակի թաքնակերպ փակ բութակային, եռակի միջանցիկ բաց բութակային, ուղղակի փայտի կեսով մակադրակով, միջանցիկ «ծիծեռնակի պոչ»-ով, բնութագիրը, բ. ճիշտ է պատկերում անկյունային միացումների էսքիզները, աշխատանքային գծագրերը, գ. ճիշտ է կատարում չափանշում, գծանշում, դ. ճիշտ է պատրաստում հանգուցամասերը, ե. ճիշտ է միացնում հանգուցամասերը, կատարում ըստ պայմանի ամրացման աշխատանքներ, զ.պահպանում է անվտանգության կանոնները:

ՈՒսումնառության արդյունք 4	Մեկնաբանել ճակատային միացումների տեսակները, բնութագիրը, պատկերել ճակատային միացումների էսքիզներ, աշխատանքային գծագրեր, պատրաստել ըստ պայմանի հանգուցամասեր, կատարել միացումներ։
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում ճակատային միացումների տեսակները՝ սեղմումադիմադրողական, ձգումադիմադրողական, ծռմանադիմադրողականություն, բնութագիրը, բ. ճիշտ է պատկերում ճակատային միացումների էսքիզները և աշխատանքային գծագրերը, գ. ճիշտ է կատարում չափանշում, գծանշում, դ. ճիշտ է պատրաստում հանգուցամասերը, ե. ճիշտ է միացնում հանգուցամասերը,կատարում ըստ պայմանի ամրացման աշխատանքներ, զ.պահպանում է անվտանգության կանոնները։
ՈՒսումնառության արդյունք 5	Մեկնաբանել կողային միացումների տեսակները, բնութագիրը, պատկերել կողային միացումների էսքիզներ, աշխատանքային գծագրեր, պատրաստել ըստ պայմանի հանգուցամասեր, կատարել միացումներ։
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում կողային միացումների տեսակները՝ հարթափորակներով, ներդրովի ձողերով, քառորդանով, ակոսով և սանրիկով, եզրածածկով, վրածածկով, բնութագիրը, բ. ճիշտ է պատկերում կողային միացումների էսքիզները և աշխատանքային գծագրերը, գ. ճիշտ է կատարում չափանշում, գծանշում, դ. ճիշտ է պատրաստում հանգուցամասերը, ե. ճիշտ է միացնում հանգուցամասերը,կատարում ըստ պայմանի ամրացման աշխատանքներ, զ. պահպանում է անվտանգության կանոնները։
ՈՒսումնառության արդյունք 5	Մեկնաբանել Տ-աձև և խաչաձև միացումներ միացումների տեսակները, բնութագիրը, պատկերել Տ-աձև և խաչաձև միացումների էսքիզներ, աշխատանքային գծագրեր, պատրաստել ըստ պայմանի հանգուցամասեր, կատարել միացումներ։
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում Տ-աձև և խաչաձև միացումներ միացումների տեսակները՝ Տ-աձև նեղ գաղտնաբութակային «ծիծեռնակի պոչ»- ով, ուղիղ աստիճանային մակադրակով, և խաչաձև կես փայտի մակադրակով, միաբուն նստեցումով, բնութագիրը, բ. ճիշտ է պատկերում Տ-աձև և խաչաձև միացումների էսքիզները և աշխատանքային գծագրերը, գ. ճիշտ է կատարում չափանշում, գծանշում, դ. ճիշտ է կատարում դ. ճիշտ է պատրաստում հանգուցամասերը, ե. ճիշտ է միացնում հանգուցամասերը,կատարում ըստ պայմանի ամրացման աշխատանքներ, զ. պահպանում է անվտանգության կանոնները։
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՍՏՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀԱ-3-10-006
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողների մոտ ձևավորել և զարգացնել փայտամշակման հաստոցներով տիպային դետալներ պատրաստելու հմտություններ, պահպանելով անվտանգության կանոնները։ Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, որոնք պատրաստվում են կատարել ատաղձագործական, հյուսնական աշխատանքներ։

Մոդուլի տևողությունը	90 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀԱ-3-10-003 «Ծառերի և փայտանյութերի հիմնական հատկությունների բնութագրման ունակություն» մոդուլը
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել փայտամշակման մեջ օգտագործվող հիմնական նախապատրաստվածքների բնութագրերը, տեսակները, կատարել նախապատրաստվածքների չափումներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում նախապատրաստվածքների տեսակները՝ երկեզրակային չորսու, եռաեզրակային չորսու, քառաեզրակային չորսու, անկողահատ տախտակ, մաքրակողահատ տախտակ, կողահատ տախտակ բութ բնեզրով, կողահատ տախտակ սուր բնեզրով, չորսու, փուշտյա սապատափայտ, տախտակյա սապատափայտ, անկողահատ անկողահատ փայտակոճ, կողահատ փայտակոճ, բ. ճիշտ է մեկնաբանում տեսակները՝ կողային, ծուծային, կենտրոնական, գ. ճիշտ է կատարում նախապատրաստվածքների չափումները՝ հաշվառման միավորի ընտրություն, խիտ խորանարդ մետր, պահեստային խորոնարդ մետր:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել փայտամշակման հաստոցներում օգտագործվող փայտակտրող, չափիչ և գծանշող գործիքների բնութագրերը, աշխատանքների սկզբունքները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պարզաբանում սկավառակային սղոցների տեսակները, մեկնաբանում կատարվող աշխատանքների սկզբունքները, բ. ճիշտ է պարզաբանում սկավառակային ֆրեզների տեսակները, մեկնաբանում կատարվող աշխատանքների սկզբունքները, գ. ճիշտ է պարզաբանում դանակագլանը, մեկնաբանում կատարվող աշխատանքների սկզբունքները, դ. ճիշտ է պարզաբանում գայլիկոնների տեսակները, մեկնաբանում կատարվող աշխատանքների սկզբունքները, ե. ճիշտ է պարզաբանում անցքալայնիչների տեսակները, մեկնաբանում կատարվող աշխատանքների սկզբունքները, զ. ճիշտ է պարզաբանում հղկանյութային գործիքների տեսակները, մեկնաբանում կատարվող աշխատանքների սկզբունքները: է. ճիշտ է պարզաբանում չափիչ և գծանշող գործիքների տեսակները:
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել լայնական սղոցման կլորասղոցային հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, մեկնաբանում լայնական սղոցման կլորասղոցային հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը: բ. Ճիշտ է միացնում և անջատում լայնական սղոցման կլորասղոցային հաստոցը, գ. ճիշտ է չափանշում, ընտրում տեղակայման բազան և տեղակայում սղոցանյութը, դ. ճիշտ է պատրաստում ըստ պայմանի շինվածքը, ե. պահպանում է անվտանգության կանոնները:

ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել երկայնական սղոցման կլորասղոցային հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ։
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, մեկնաբանում երկայնական սղոցման կլորասղոցային հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը։ բ. Ճիշտ է միացնում և անջատում երկայնական սղոցման կլորասղոցային հաստոցը, գ. ճիշտ է չափանշում, ընտրում տեղակայման բազան և տեղակայում սղոցանյութը, դ. ճիշտ է պատրաստում ըստ պայմանի շինվածքը, ե. պահպանում է անվտանգության կանոնները։
ՈՒսումնառության արդյունք 5	Ներկայացնել ֆուգանիչ հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ։
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, մեկնաբանում հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը։ բ. Ճիշտ է միացնում և անջատում ֆուգանիչ հաստոցը, գ. ճիշտ է չափանշում, ընտրում տեղակայման բազան և տեղակայում նախապատրաստվածքը, դ. ճիշտ է պատրաստում ըստ պայմանի շինվածքը, ե. պահպանում է անվտանգության կանոնները։
ՈՒսումնառության արդյունք 6	Ներկայացնել ռեյսմուսային հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ։
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, մեկնաբանում ռեյսմուսային հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը։ բ. Ճիշտ է միացնում և անջատում ռեյսմուսային հաստոցը, գ. ճիշտ է չափանշում, ընտրում տեղակայման բազան և տեղակայում նախապատրաստվածքը, դ. ճիշտ է պատրաստում ըստ պայմանի շինվածքը, ե. պահպանում է անվտանգության կանոնները։
ՈՒսումնառության արդյունք 7	Ներկայացնել ֆրեզերային հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ։
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, մեկնաբանում ֆրեզերային հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը։ բ. Ճիշտ է միացնում և անջատում ֆրեզերային հաստոցը, գ. ճիշտ է չափանշում, ընտրում տեղակայման բազան և տեղակայում նախապատրաստվածքը,

	դ. ճիշտ է պատրաստում ըստ պայմանի շինվածքը, ե. պահպանում է անվտանգության կանոնները:
ՈՒսումնառության արդյունք 8	Ներկայացնել բութակահատ հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, մեկնաբանում բութակահատ հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը: բ. Ճիշտ է միացնում և անջատում բութակահատ հաստոցը, գ. ճիշտ է չափանշում, ընտրում տեղակայման բազան և տեղակայում նախապատրաստվածքը, դ. ճիշտ է պատրաստում ըստ պայմանի շինվածքը, ե. պահպանում է անվտանգության կանոնները:
ՈՒսումնառության արդյունք 9	Ներկայացնել գայլիկոնիչ-փորակիչ հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, մեկնաբանում գայլիկոնիչ-փորակիչ հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը: բ. Ճիշտ է միացնում և անջատում գայլիկոնիչ-փորակիչ հաստոցը, գ. ճիշտ է չափանշում, ընտրում տեղակայման բազան և տեղակայում նախապատրաստվածքը, դ. ճիշտ է պատրաստում ըստ պայմանի շինվածքը, ե. պահպանում է անվտանգության կանոնները:
ՈՒսումնառության արդյունք 10	Ներկայացնել հղկման հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը, պարզաբանել աշխատատեղին պահանջվող պայմանները, պատրաստել տիպային դետալներ:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, մեկնաբանում հղկման հաստոցի հիմնական մասերի աշխատանքի սկզբունքը: բ. Ճիշտ է միացնում և անջատում հղկման հաստոցը, գ. ճիշտ է չափանշում, ընտրում տեղակայման բազան և տեղակայում նախապատրաստվածքը, դ. ճիշտ է պատրաստում ըստ պայմանի շինվածքը, ե. պահպանում է անվտանգության կանոնները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԱԽՏԱԿԵ ՀԱՏԱԿԻ ՓԱՅՏԵ ՇԻՆՎԱԾՔԱՄԱՍԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀԱ-3-10-007
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողների մոտ ձևավորել և զարգացնել, տախտակե հատակի փայտե շինվածքամասերի պատրաստման հմտություններ: Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, որոնք պատրաստվում են կատարել ատաղձագործական, հյուսնական աշխատանքներ:

Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀԱ-3-10-006 «Փայտամշակման հաստոցներով աշխատանքների հմտություններ» մոդուլը
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Բացատրել տախտակե հատակի կառուցվածքը, օգտագործվող նյութերը, կատարել հատակի չափագծումներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում հատակի կառուցվածքը, բ. ճիշտ է կատարում չափագծումներ: գ. ճիշտ է մեկնաբանում օգտագործվող նյութերը՝ ջերմամեկուսիչ նյութեր, ջրամեկուսիչ նյութեր, ձայնակլանիչ և ձայնամեկուսիչ նյութեր, էլեկտրամեկուսիչ նյութեր, քսուկային նյութեր:
ՈՒսումնառության արդյունք 2	Պատկերել տախտակե հատակի փայտե շինվածքամասերի էսքիզները, աշխատանքային գծագրերը,պատրաստել տախտակե հատակի փայտե շինվածքամասերը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պատկերում տախտակե հատակի փայտե շինվածքամասերի՝ տակդիր,տափագերան,հատակի տախտակ, մանրահատակ, շրիշակ, էսքիզները, աշխատանքային գծագրերը, բ. ճիշտ է պատրաստում տախտակե հատակի փայտե շինվածքամասերը, գ. պահպանում է անվտանգության կանոնները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԱՆԻՔԻ ՓԱՅՏԵ ՇԻՆՎԱԾՔԱՄԱՍԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀԱ-3-10-008
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողների մոտ ձևավորել և զարգացնել տանիքի փայտե շինվածքամասերի պատրաստման հմտություններ: Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, որոնք պատրաստվում են կատարել ատաղձագործական, հյուսնական աշխատանքներ:
Մոդուլի տևողությունը	60 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀԱ-3-10-006 «Փայտամշակման հաստոցներով աշխատանքների հմտություններ» մոդուլը
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել տանիքների տեսակների առանձնահատկությունները, պարզաբանել փայտե շինվածքների կառուցվածքը, կատարել տանիքի չափագծումներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում տանիքի տեսակները՝ միալանջ, երկլանջ, վրանաձև, գավակային, կիսագավակային, մանսարդային, և կոնստրուկցիոն էլեմենտները՝ կրող մաս, հիմք, մեկուսիչ շերտ, տանիքածածկ, բ. ճիշտ է կատարում տանիքի չափանշում,
ՈՒսումնառության արդյունք 2	Պարզաբանել կրող մասի կառուցվածքը, պատկերել կրող մասի շինվածքների էսքիզը, աշխատանքային գծագիրը:

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պարզաբանում կրող մասի կառուցվածքը՝ փայտե հեծաններ, ծպեղ, հավաքման ձևվածքներ, բ. ճիշտ է պատկերում կրող մասի շինվածքների էսքիզը և աշխատանքային գծագիրը,
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել ծպեղի տեսակների առանձնահատկությունները, պատրաստել փայտե հեծաններ, ծպեղի շինվածքամասեր, հավաքման ձևվածքների շինվածքամասեր:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում ծպեղի տեսակների առանձնահատկությունները՝հենարանային,կախովի, բ. ճիշտ է պատկերում շինվածքամասերի էսքիզները և աշխատանքային գծագրերը, դ. ճիշտ է պատրաստում ծպեղի շինվածքամասերը՝ ծպեղային ոտքը,պարզունակը,հեծանային ծածկը, որմնափայտը, պրկանը, կախույունը, դիմկալը, ե. ճիշտ է պատրաստում հեծանները, պատրաստում հատակի շինվածքամասերը, զ. ճիշտ է պատրաստում հավաքման ձևվածքների շինվածքամասերը, է. պահպանում է անվտանգության կանոնները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴՌՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀԱ-3-10-009
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողների մոտ ձևավորել և զարգացնել տարբեր տեսակի դռների պատրաստման հմտություններ: Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, որոնք պատրաստվում են կատարել ատաղձագործական, հյուսնական աշխատանքներ:
Մոդուլի տևողությունը	66 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀԱ-3-10-005 «Հյուսնային միացումներ պատրաստելու, ամրացնելու հմտություններ» և ԱՀԱ-3-10-005 «Փայտամշակման հաստոցներով աշխատանքների հմտություններ» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել ըստ հատկանիշների դռների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում ըստ հատկանիշների դռների տեսակները՝ ըստ նշանակության, ըստ կառուցվածքի, ըստ նյութի, բ. ճիշտ է կարդում դռների աշխատանքային գծագրերը, գ. ճիշտ է մեկնաբանում դռների կառուցվածքային առանձնահատկությունները:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել ըստ նշանակության, ըստ կառուցվածքի դռների տեսակները, կատարել էսքիզներ և աշխատանքային գծագրեր:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում ըստ նշանակության՝ արտաքին, ներքին, ըստ կառուցվածքի՝ փակ, ապակե, կիսապակե, միասնամեջ, երկսնամեջ, վահանավոր, լողաթավոր դռների տեսակները,
	բ. ճիշտ է կատարում ըստ պայմանի արտաքին դռների էսքիզները և աշխատանքային գծագրերը,
ՈՒսումնառության արդյունք 3	Պատրաստել ըստ պայմանի արտաքին դուռ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պատկերում ըստ պայմանի արտաքին դռան շինվածքամասերի էսքիզներն ու աշխատանքային գծագրերը, բ. ճիշտ է կատարում չափադրումները, գծանշումները, պատրաստում շինվածքամասերը, գ. ճիշտ է կատարում շինվածքամասերի միացումները,

	դ. ճիշտ է երեսամշակում, ե. ճիշտ է երեսապատում, զ. պահպանում է անվտանգության կանոնները:
ՈՒսումնառության արդյունք 4	Պատրաստել ըստ պայմանի ներքին դուռ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պատկերում ըստ պայմանի ներքին դռան շինվածքամասերի էքիզներն ու աշխատանքային գծագրերը, բ. ճիշտ է կատարում չափադրումները, գծանշումները, պատրաստում շինվածքամասերը, գ. ճիշտ է կատարում շինվածքամասերի միացումները, դ. ճիշտ է երեսամշակում, ե. ճիշտ է երեսապատում, զ. պահպանում է անվտանգության կանոնները:
ՈՒսումնառության արդյունք 5	Ներկայացնել երեսամշակման մակերևույթների նախապատրաստման համար օգտագործվող նյութերի բնութագրերը, գործիքների տեսակները, կատարել մակերևույթների նախապատրաստման աշխատանքները, երեսամշակում:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանել երեսամշակման մակերևույթների նախապատրաստման համար օգտագործվող նյութերի՝ հղկաթուղթ, հղկման մածիկ, հղկման փոշի, նախաներկ, ծակոտալցիչ, մածիկ, խեժազերծման և սպիտակեցման նյութեր, բնութագրերը, բ. ճիշտ է մեկնաբանում երեսամշակման ձեռքի գործիքների տեսակները՝ մածկաթիակ, վրձիններ, խից, գ. ճիշտ է կատարում մակերևույթների նախապատրաստումը, դ. ճիշտ է կատարում երեսամշակումը, ե. պահպանում է անվտանգության կանոնները:
ՈՒսումնառության արդյունք 6	Ներկայացնել երեսապատման համար օգտագործվող նյութերի բնութագիրը, կատարել երեսապատում:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում երեսապատման համար օգտագործվող նյութերի տեսակները՝ ներկանյութ, լցանյութ, լուծիչ, նոսրացուցիչ, պլաստիկարար, թաղանթագոյացնող նյութեր, լաքեր, արծնուկ, ներկեր, սոսինձ, ձևավոր թղթաշերտավոր պլաստիկ, խեժասինթետիկ ժապավեն, գ. ճիշտ է կատարում ըստ տվյալ պայմանի երեսապատումը, դ. պահպանում է անվտանգության կանոնները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀԱ-3-10-010
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողների մոտ ձևավորել և զարգացնել տարբեր տեսակի պատուհանների պատրաստման հմտություններ: Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, որոնք պատրաստվում են կատարել ատաղձագործական, հյուսնական աշխատանքներ:
Մոդուլի տևողությունը	66 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀԱ-3-10-005 «Հյուսնային միացումներ պատրաստելու, ամրացնելու հմտություններ» և ԱՀԱ-3-10-005 «Փայտամշակման հաստոցներով աշխատանքների հմտություններ» մոդուլները:

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել ըստ հատկանիշների պատուհանների տեսակները, մեկնաբանել կառուցվածքային առանձնահատկությունները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ըստ հատկանիշների պատուհանների տեսակները՝ ըստ արտաքին տեսքի, ըստ կառուցվածքի էլեմենտների, ըստ բացման, ըստ նյութի, բ. ճիշտ է կարդում պատուհանների աշխատանքային գծագրերը, գ. ճիշտ է մեկնաբանում պատուհանների կառուցվածքային առանձնահատկությունները:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել ըստ նշանակության, ըստ կառուցվածքի պատուհանների տեսակները, կատարել էսքիզներ և աշխատանքային գծագրեր:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում ըստ արտաքին տեսքի՝ միափեղկանի, երկփեղկանի, ըստ կառուցվածքի՝ առանձնացված փեղկերով, միացված փեղկերով, ներս բցվովի, դուրս բացվովի, օդանցքով, վերնափեղկով, բ. ճիշտ է կատարում ըստ պայմանի պատուհանների էսքիզները և աշխատանքային գծագրերը,
ՈՒսումնառության արդյունք 3	Պատրաստել ըստ պայմանի պատուհան:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պատկերում ըստ պայմանի պատուհանի շինվածքամասերի էսքիզներն ու աշխատանքային գծագրերը, բ. ճիշտ է կատարում չափադրումները, գծանշումները, պատրաստում շինվածքամասերը, գ. ճիշտ է կատարում շինվածքամասերի միացումները, դ. ճիշտ է երեսամշակում, ե. ճիշտ է երեսապատում, զ. պահպանում է անվտանգության կանոնները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԱՐԶ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀԱ-3-10-011
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողների մոտ ձևավորել և զարգացնել կենցաղում օգտագործվող պարզ փայտե շինվածքների պատրաստման ունակություններ ու հմտություններ: Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, որոնք պատրաստվում են կատարել ատաղձագործական, հյուսնական աշխատանքներ:
Մոդուլի տևողությունը	30 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀԱ-3-10-005 «Հյուսնային միացումներ պատրաստելու, ամրացնելու հմտություններ» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել հյուսնային աթոռակի կառուցվածքը, կատարել էսքիզ, աշխատանքային գծագիր, պատրաստել հյուսնային աթոռակ:

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում հյուսնային աթոռակի կառուցվածքը, բ. ճիշտ է պատկերում աթոռակի, շինվածքամասերի էսքիզը և աշխատանքային գծագիրը, գ. ճիշտ է կատարում չափանշումներ, գծանշումներ, դ. ճիշտ է պատրաստում շինվածքամասերը, ե. ճիշտ է կատարում միացումները, զ. ճիշտ է երեսապատում, է. պահպանում է անվտանգության կանոնները:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել կարճապահարանի կառուցվածքը, կատարել էսքիզ, աշխատանքային գծագիր, պատրաստել հյուսնային աթոռակ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում կարճապահարանի կառուցվածքը, բ. ճիշտ է պատկերում կարճապահարանի , շինվածքամասերի էսքիզը և աշխատանքային գծագիրը, գ. ճիշտ է կատարում չափանշումներ, գծանշումներ, դ. ճիշտ է պատրաստում շինվածքամասերը, ե. ճիշտ է կատարում միացումները, զ. ճիշտ է երեսապատում, է. պահպանում է անվտանգության կանոնները:

Աղյուսակ 3

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2907 «Ատաղձագործական, մանրահատակա-գործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության «Հյուսն,ատաղձագործ» որոկավորման օրինակելի ուսումնական պլան

N	Դասընթացներ, առարկաներ և մոդուլներ	Շաբաթ-ների թիվը	ՈՒսանողի առավելագույն բեռնվածու-թյունը, ժամ	Պարտադիր նվազագույն պարապմունք-ներ, ժամ	ՈՒսուցման երաշխա-վորվող տարին
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ				
1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		94	72	1
2	Քաղաքագիտության և սոցոլոգիայի հիմունքներ		24	18	1
3	Իրավունքի հիմունքներ		54	36	1
4	Պատմություն		54	36	1
5	Օտար լեզու		90	60	1
6	Ֆիզիկական կուլտուրա		66	66	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		**382**	**288**	
	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	Էկոլոգիայի հիմունքներ		42	36	1
2	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		24	18	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		66	54	
	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
1	Հաղորդակցության հմտություններ		54	36	1
2	Անվտանգություն և առաջին օգնություն		54	36	1
3	Համակարգչային օպերատրության հիմունքներ		54	36	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		**162**	**108**	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	Ճարտարագիտական գրաֆիկայի և շինարարական գծագրության տարրերի պատկերման ունակություն		54	36	1
2	Թույլտվածքներ և նստեցվածքներ,անհարթություններ, չափիչ,չափանշման գործիքներ,չափումներ կատարելու ունակություն		54	36	1
3	Ծառերի և փայտանյութի հիմնական հատկությունների, կտրվածքների, արատների բնութագրման ունակություն		54	36	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		162	108	

	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	Ձեռքի գործիքներով աշխատանքների հմտություններ		95	60	1
2	Հյուսնային միացումներ պատրաստելու, ամրացնելու հմտություններ		255	96	1
3	Փայտամշակման հաստոցներով աշխատանքների հմտություններ		135	90	1
4	Տախտակե հատակի փայտե շինվածքամասերի պատրաստման հմտություններ		81	54	1
5	Տանիքի փայտե շինվածքամասերի պատրաստման հմտություններ		90	60	1
6	Դռների պատրաստման հմտություններ		99	66	1
7	Պատուհանների պատրաստման հմտություններ		99	66	1
8	Պարզ կենցաղային իրերի պատրաստման հմտություններ		45	30	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		783	522	
	ԸՆՏՐՈՎԻ		54	36	
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ			72	
	ԸՆԴԱՄԵՆԸ	33	1609	1188	
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ		100		
	ՊՐԱԿՏԻԿԱ	8			
	ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ	1			
	ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ	1			
	ԸՆԴԱՄԵՆԸ	43			